# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի 04.09.2024թ. նիստի*

*ք.Երևան* *04.09.2024թ.*

*Նախագահությամբ Լ.Պետրոսյանի*

*քարտուղարությամբ Գ.Հովսեփյանի*

*Նիստին մասնակցում էին Դիտորդ խորհրդի հետևյալ անդամները՝*

1. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Լևոն Պետրոսյան*
2. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Վահագն Ավագյան*
3. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Հովհաննես Եղյան*
4. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Խաչիկ Նազարյան*
5. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Տիգրան Սահակյան*
6. *Դիտորդ խորհրդի անդամ՝ Գևորգ Ավագյան*

*Քվորումն ապահովված է, և Դիտորդ խորհուրդը իրավազոր է որոշումներ ընդունել օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:*

*Օրակարգում՝*

1. *՛Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա՛ ԻԿ կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից՝ Ա/Ձ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի վերաբերյալ՝ ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված Ա/Ձ Վարազդատ Դավթյանի ներկայացուցիչ Քրիստինե Գագիկի Տոնոյանի . թիվ Մ/23400-2024 դիմումի հիման վրա ՛ՍԳԿԿ՛ ԻԿ Դիտորդ խորհրդին 19.08.2024թ.-ին ներկայացված՝ 08.08.2024թ.-ի եզրակացության քննարկում:*
2. *՛Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա՛ ԻԿ կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից՝ ՛Կուչինա՛ ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի վերաբերյալ՝ ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված ՛Կուչինա՛ ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արմեն Մելքումյանի . թիվ Մ/39512-2024 դիմումի հիման վրա ՛ՍԳԿԿ՛ ԻԿ Դիտորդ խորհրդին 19.08.2024թ.-ին ներկայացված՝ 25.07.2024թ.-ի եզրակացության քննարկում:*
3. *՛Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա՛ ԻԿ կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից՝ Հայկանուշ Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ Սաղաթել Ալեքսանյանի վերաբերյալ՝ Հայկանուշ Սիմոնյանի . դիմումի հիման վրա ՛ՍԳԿԿ՛ ԻԿ Դիտորդ խորհրդին 19.08.2024թ.-ին ներկայացված՝ 25.07.2024թ.-ի եզրակացության քննարկում:*
4. *՛Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա՛ ԻԿ կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից՝ ՛Ռուստ Մամիկոն՛ ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի վերաբերյալ՝ ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված ՛Հայէկոնոմբանկ՛ ԲԲԸ-ի գործադիր տնօրեն Ա.Առաքելյանի . թիվ Մ/22576-2024 դիմումի հիման վրա ՛ՍԳԿԿ՛ ԻԿ Դիտորդ խորհրդին 22.08.2024թ.-ին ներկայացված՝ 30.07.2024թ.-ի եզրակացության քննարկում:*
5. *Ընթացիկ հարցեր :*

Կապված Դիտորդ խորհրդի նախագահ Արսեն Չիտչյանի բացակայության հանգամանքով, համաձայն <<ՍԳԿԿ>> ԻԿ Կանոնադրության 10-րդ հոդվածի 18-րդ կետի նիստը վարում է Դիտորդ խորհրդի ամենատարեց անդամ Լևոն Պետրոսյանը:

Մինչև օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը, <<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լ. Պետրոսյանը հանդես եկավ ողջույնի խոսքով:

1. Դիտորդ խորհրդի նիստի նախագահ Լևոն Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 1-ին հարցը և այն դրվեց քննարկման:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Լևոն Պետրոսյանը, Վահագն Ավագյանը, Տիգրան Սահակյանը, Հովհաննես Եղյանը, Գևորգ Ավագյանը :

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Չհաստատել <<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> ԻԿ Կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը, այն է՝ Ա/Ձ Վարազդատ Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն, այլ Խ.Նազարյանին տրամադրել մեկ շաբաթ ժամկետ վարույթին վերաբերվող լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու համար :

2. Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լ. Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 2-րդ հարցը և այն դրվեց քննարկման:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Լևոն Պետրոսյանը, Վահագն Ավագյանը, Տիգրան Սահակյանը, Հովհաննես Եղյանը և Խաչիկ Նազարյանը:

<<Կուչինա>> ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանին ենթարկել կարգապահական տույժի՝ հայտարարել նախազգուշացում, կողմ քվեարկեցին 4 Դիտորդ խորհրդի անդամներ՝ Լ.Պետրոսյանը, Տ.Սահակյանը, Հ.Եղյանը և Վ.Ավագյանը : Կարճել կարգապահական վարույթը, կողմ քվեարկեց Դիտորդ խորհրդի մեկ անդամ՝ Խ.Նազարյանը :

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

<<Կուչինա> ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Գևորգ Ավագյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ հայտարարել նախազգուշացում :

Որոշումը դրվեց քվեարկության.

Կողմ-4

Դեմ-1

Ձեռնպահ-0

Որոշումը ընդունվեց :

3. Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լ.Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 3-րդ հարցը և այն դրվեց քննարկման:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Լևոն Պետրոսյանը, Վահագն Ավագյանը, Տիգրան Սահակյանը, Հովհաննես Եղյանը, Գևորգ Ավագյանը և Խաչիկ Նազարյանը:

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Հաստատել <<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> ԻԿ Կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը, այն է՝ կարճել Հայկանուշ Սիմոնյանի սնանկության գործով կառավարիչ Սաղաթել Ալեքսանյանի գործողությունների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը:

Որոշումը դրվեց քվեարկության.

Կողմ-6
Դեմ-0
Ձեռնպահ-0
Որոշումը ընդունվեց միաձայն :

4. Դիտորդ խորհրդի նիստի նախագահող Լ.Պետրոսյանը ներկայացրեց օրակարգի 4-րդ հարցը և տեղեկացրեց, որ Հովհաննես Եղյանը 09.10.2023 թվականից չի հանդիսանում ՙՙՈւստր Մամիկոն՚ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ:

Հարցը դրվեց քննարկման:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումն հայտնեցին Լևոն Պետրոսյանը, Վահագն Ավագյանը, Տիգրան Սահակյանը, Գևորգ Ավագյանը և Խաչիկ Նազարյանը:

<<Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա>> Ինքնակարգավորվող Կազմակերպության Դիտորդ խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

Չհաստատել <<Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա>> ԻԿ Կարգապահական հանձնաժողովի եզրակացությունը, այն է՝ <<Ուստր Մամիկոն>> ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նախազգուշացում, այլ կարճել հարուցված կարգապահական վարույթը:

Որոշումը դրվեց քվեարկության.

Կողմ-5
Դեմ-0
Ձեռնպահ-0
Որոշումը ընդունվեց միաձայն :

Նախագահող՝ Լ.Պետրոսյան

Քարտուղար՝ Գ.Հովսեփյան